29 մարտի 2019 թվականի N 309 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 21-Ի N 703-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հունիսի 21-ի «Ներդրումային ծրագրի շրջանակներում «ՎԱԲԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ապրանքների ներմուծման դեպքում մաքսային և հարկային մարմինների կողմից հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարների վճարման ժամկետը երեք տարի ժամկետով հետաձգելու մասին» N 703-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «2019 թվականի դեկտեմբերի 20-ը» բառերը փոխարինել «2021 թվականի հունիսի 19-ը» բառերով.

2) որոշման հավելվածը 23-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողերով՝

«24	5404	Մենաթել՝ հակակարկտային ցանցի հյուսման համար	կգ	1 000 000	1 550 840 000
25	7312	Ոլորված մետաղալար՝ առանց պատվածքի	կգ	500 000	460 382 800
26	3926	Արտադրատեսակներ պլաստմասսայից	կգ	6 700 000	1 473 409 000
27	7312	Ոլորված մետաղալար, մետաղաճոպաններ, մետաղապարաններ, հյուսված քուղեր, առասաններ և նույնանման արտադրատեսակներ սև մետաղներից	կգ	6 750 000	746 130 000
28	7326	Արտադրատեսակներ սև մետաղներից	կգ	855 000	1 383 375 000
29	3923	Պլաստմասսայից կոճեր	կգ	200 000	305 640 000
30	3908	Պոլիամիդներ սկզբնական ձևով	կգ	200 000	1 728 000 000
31	3902	Պոլիպրոպիլեն սկզբնական ձևով	կգ	200 000	1 440 000 000».

3) հավելվածի «Ընդամենը» պարբերության մեջ «229,176,850» թիվը փոխարինել «9,316,953,650» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ